Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պետական համալսարանի

կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2016 թ. մարտի 23-ին կայացած թիվ 8 նիստի

Օրակարգում՝

- Կենսաբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման հարցը
- Մրցույթ
- Մենագրության տպագրման երաշխավորման հարցը
- Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 35-ը:

- **Կենսաբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան է.Ս.Գևորգյանի հաղորդումը կենսաբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման վերաբերյալ: Նա նշեց, որ ֆակուլտետում ստեղծված հանձնաժողովը կազմել է կենսաբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, որը ռեկտորատում դեռ առաջին ընթերցմամբ հավանության էր արժանացել: Եվ, արդեն կենսաբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատվել է: Իսկ դա նշանակում է, որ այսուհետ մենք պետք է առաջնորդվենք համաձայն այդ ծրագրի:

- **Մրցույթ**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ էկոլոգիայի և բնության պահպանության (1 տեղ), բուսաբանության և սնկաբանության (1 տեղ), ամբիոններում 1.0 դրույքաչափով դոցենտի պաշտոնի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանը: Նա ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուների մասին (կից ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նախագահ՝ դեկանի տեղակալ, կ.գ.թ. Կ.Ա.Ղազարյան, անդամներ՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան, ուս.խորհրդի անդամ Ս.Ա. Գալստյան:

ԼՍԵՑԻՆ՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Կ.Ա.Ղազարյանի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները[a]

1. Ալեքսանդր Հրանտի Եսայան ՝ կողմ՝ 34, դեմ՝ 1,
2. Աստղիկ Վիկտորի Պողոսյան ՝ կողմ՝ 34, դեմ՝ 0, անվավեր՝ 1

2. քվեարկության արդյունքների հիման վրա՝

• Ալեքսանդր Հրանտի Եսայանին համարել ընտրված էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնում դոցենտի պաշտոնում:

• Աստղիկ Վիկտորի Պողոսյանին համարել ընտրված բուսաբանության և սնկաբանության ամբիոնում դոցենտի պաշտոնում:

- **Մենագրության տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ սնկաբանության և բուսաբանության ամբիոնի պրոֆեսոր Ս.Մ.Բաղալյանի և կ.գ.թ., ավագ գիտաշխատող Ն.Գ.Ղարիբյանի ներկայացրած «Սնկային տարբեր հավաքածուների միցելիումի կառուցվածքային առանձնահատկությունները (Երևանի պետական համալսարանի կուլտուրաների հավաքածուի կատալոգ և ատլաս)» մենագրության հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի պատվավոր վարիչ, ակադեմիկոս Լ.Լ.Օսիպյանը, մանրէաբանության և մանրէների ու

բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,պրոֆ. Ա.Հ. Թռչունյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ անհրաժեշտ է որոշ շտկումներ կատարել մենագրության վերնագրի մեջ :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել մենագրությունը հրատարակման :

- **Դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Սեդա Վիկորի Մարությանի դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատման հարցը:

Դոցենտ Սեդա Մարությանը հանդես եկավ զեկույցով և ներկայացրեց իր կատարած աշխատանքը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը, մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ Հ.Հ.Փանոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով գիտական խորհրդի և ամբիոնի կարծիքը՝

1. հաստատել Սեդա Մարությանի դոկտորական ատենախոսության թեման՝ «Նյութափոխանակության փոփոխությունները և ԴՆԹ-ի վնասվածքները ռենտգենյան ճառագայթման ենթարկված Candida guilliermondii ՀՊ-4 խմորասնկային բջիջներում»« Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ,
2. Գիտական խորհրդատու՝ կ.գ.դ., պրոֆեսոր՝ Լ.Հ.Նավասարդյանին:

- **Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ՝ մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆեսոր Արմեն Համբարձումի Թռչունյանին ՀՀ Գիտության կոմիտեի բարձրագույն պարգևով պարգևատրելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը : Պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը նշեց, որ ս.թ. ապրիլի

29-ին լրանում է ԵՊՀ Մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխ-նոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ, պրոֆեսոր Արմեն Համբարձումի Թռչունյանի ծննդյան 60-ամյակը : Պրոֆեսոր Ա.Հ.Թռչունյանը Հայաստանի լավագույն գիտնականներից է, կենսաթաղանթների կենսաֆիզիկայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի հայտնի մասնագետ, միջազգային համբավ վայելող գիտնական, մի շարք միջազգային գիտական ընկերությունների անդամ: Պրոֆեսոր Ա.Հ.Թռչունյանը բազմիցս բարձր է պահել հայաստանյան գիտության վարկանիշը միջազգային գիտական ֆորումներում և, անշուշտ, արժանի է գնահատանքի :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ միջնորդել ՀՀ Գիտության պետական կոմիտեի առջև՝ Արմեն Համբարձումի Թռչունյանին ՀՀ Գիտության պետական կոմիտեի բարձրագույն պարգևով պարգևատրելու համար:

Որոշումն ընդունվեց միաձայն :

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Աստղիկ Աբրահամյանին: Ա. Աբրահամյանը ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետի ուսանողների որոշ առաջարկներ և խնդրանքներ: Առաջինը, ուսանողները ցանկանում են, որպեսզի լաբարատոր պարապմունքներին պահպանվեն անվտանգության կանոնները, մասնավորապես պիպետների հետ աշխատելիս օգտագործվեն տանձիկներ: Մյուս ցանկությունը այն էր, որ դասախոսությունները նախապես տրամադրվեն ուսանողներին: Ա. Աբրահամյանը հայտնեց մագիստրոսների ցանկությունը, որպեսզի լաբորատոր պարապմունքները մագիստրատուրայում ավելացվեն:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան